



Տեղեկատվության ազատությունը Հայաստանում Առաջարկներ

Շուշան Դոյրոյան
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ՀԿ նախագահ, բգթ

ԲԱԺԻՆ Ա.

Պրոակտիվ հրապարակայնության հիմնախնդիրները, պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության պրոակտիվ հրապարակումը

Տեղեկատվության ազատության կարեւորագույն տարրերից է պրոակտիվ հրապարակման սկզբունքը: Այս սկզբունքի էությունն այն է, որ տեղեկություն տնօրինող մարմինները սեփական նախաձեռնությամբ հրապարակում են իրենց գործունեությանն առնչվող տեղեկություններ՝ օգտագործելով նաեւ նոր տեխնոլոգիաների հնարավորությունները: Սեփական նախաձեռնությամբ և ըստ անհրաժեշտության, հանրային մարմինը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի իր տնօրինման տակ գտնվող ընդհանուր հետաքրքրության պաշտոնական փաստաթղթերը հանրայնացնելու համար՝ հրապարակայնությանը և հանրային կառավարման արդյունավետությանը նպաստելու և հանրության իրազեկ մասնակցությունը խթանելու նպատակով:

Տեղեկատվության ազատության պրակտիկան ցույց է տալիս, որ հասարակության համար առավել հեշտ ու արդյունավետ է ՏՄ իրավունքի իրականացումը, եթե պրոակտիվ հրապարակման գործառույթը պատշաճ կերպով է իրականացվում պետական մարմինների կողմից: Հարցումների միջոցով տեղեկատվություն ստանալը ժամանակատար և ծախսատար է: Պրոակտիվ հրապարակման գործառույթը օգտակար է առաջին հերթին նաեւ պետական մարմինների համար՝ այն նպաստում է խնայել պետական ռեսուրսները, տեխնիկական միջոցները եւ ժամանակը:

Մրանից ածանցվող մյուս կարեւոր պայմանն այն է, որ սեփական նախաձեռնությամբ հրապարակված տեղեկատվությունը պետք է իսկապես հասանելի ու մատչելի լինի մարդկանց համար: Այն պետք է ներկայացվի այնպես, որ հեշտ լինի այն գտնելը, իսկ ընթերցելիս՝ պարզ և հասկանալի:

ՀՀ-ում վերոնշյալ կանոնները սահմանվել են 2003թ ընդունված Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով: Հոդվածում ամրագրված է 13 խումբ տեղեկությունների պրոակտիվ հրապարակման պահանջ: 2016թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ է մտած «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1204-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) նախատեսվեցին պրոակտիվ հրապարակայնության խթանման լրացուցիչ երաշխիքներ:

SU մասին օրենքը նաեւ հաստակեցնում է, թե ինչ պարբերականությամբ պետք է պարտադիր հրապարակման տեղեկությունները մատչելի դարձվեն հանրության համար: Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվում է. «տեղեկություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները»: Իսկ 4-րդ կետի համաձայն «Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում»: Կարելու է, որ ինտերնետով հրապարակելու պայմանը դրված է SU մասին օրենքում, սակայն ոչ որպես պարտադիր պայման, այլ միայն որպես հրապարակման ձևերից մեկը:

Չնայած պրոակտիվ հրապարակայնության առումով գրանցված ընդհանուր առաջընթացին՝ տեղեկություն տնօրինող շատ մարմիններում սեփական նախաձեռնությամբ տեղեկություն հրապարակելու կարևորությունը լավ չի ընկալվում. պաշտոնական որևէ կայք լիովին չի ներառում SU մասին օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, շատ մարմինների կայքեր չեն պարունակում կարևոր և անհրաժեշտ բավարար տեղեկատվություն, շատ դեպքերում էլ առկա տեղեկությունը մատչելի և տեսանելի չէ, կամ պարզապես թարմացված չէ:

Մեր դիտարկումները ցույց են տվել նաև, որ գերատեսչական կայքերն ունեն խիստ կարիք միասնականացվելու ու մեկ միասնական ստանդարտի բերվելու: Թեև Բաց կառավարման գործընկերության շրջանակներում Հայաստանի Գործողությունների առաջին ծրագրով ընդունվեց «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին երկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1521-Ն որոշումը, որն ուղղված էր պետական մամուլի ինտերնետային կայքերի միասնականացմանը, սակայն Կարգը գործնականում չիրականացվեց. պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերից եւ ոչ մեկը լիարժեքորեն չի ապահովում այս որոշման պահանջները: Հիմնական խոչընդոտը այս նպատակին հասնելու համար նշվել է միջոցների բացակայությունը: Սակայն եթե դիտարկենք, թե որքան ռեսուրսներ են մինչ օրս ծախսվել այդ նպատակով առանձին գերատեսչությունների կայքերի ստեղծման ու լրամշակման համար, կտեսնենք, որ խնդիրը ոչ թե միջոցների սղությունն է, այլ խնդիրն համակարգված եւ միասնական մոտեցման բացակայությունը: Այսպես, համաձայն ԻԱԿ-ին տրամադրած պաշտոնական տեղեկատվության՝ 2014-2019թթ ՀՀ կառավարության եւ նախարարությունների կայքերի ստեղծման եւ վերազինման նպատակով ծախսվել է 99.786.220 դրամ, որից 75.558.920 դրամը հատկացվել է պետական բյուջեի միջոցներից: Այս ժամանակահատվածում

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

պատրաստվել է 14 նոր, եւ վերազինվել ու լրամշակվել 56 կայք: Կարծում ենք, որ միջոցները թեւեւ նպատակային, բայց ոչ խնդրի երկարաժամկետ ու համակարգային լուծմանն են ուղղվել:

Պաշտոնական կայքերում տեղեկատվության ազատության վերաբերյալ նյութերը համակարգված չեն: Տեղեկատվության ազատությանը վերաբերող շատ փաստաթղթեր, տվյալներ, պարզաբանումներ մինչ օրս ամբողջական չեն հրապարակվում կամ դրանք տեղադրվում են կայքերի տարբեր բաժիններում, ինչը օգտագործողի համար գործնականում հասանելի չի լինում: Խնդիր է նաեւ հրապարակված նյութերի թարմացումները:

Համաձայն Տեղեկություն տրամադրելու կարգի մասին ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման Հավելված 2-ի 14-րդ կետի՝ Պետական մարմնի պաշտոնական կայքը պետք է ունենա «Հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ հրապարակվում են պարբերաբար (հինգ եւ ավելի անգամ) տրված միեւնույն հարցերը եւ դրանց պատասխանները: Այս կետի ամրագրմամբ Կարգը խրախուսում է պրոակտիվ տեղեկատվության ազատությունը՝ լրացնելով եւ հարստացնելով ՏԱ օրենքով սահմանվող կարգավորումները: Կարգը նախատեսում է, որ եթե տեղեկատվություն տնօրինողը որեւէ հարցի վերաբերյալ հաճախ է ստանում հարցումներ, ապա պետք է դրանք ամփոփի ու տեղադրի իր պաշտոնական կայքում: ***Չնայած դիտարկված նախարարությունների կայքերի մեծ մասն ունի Հաճախ տրվող հարցեր բաժինը, սակայն դրանք չթարմացվող բաժիններ են:*** Կայքի գործարկման հենց սկզբից այստեղ տեղադրվում են մարմնի գործունեությանը կամ ոլորտին վերաբերող մի քանի հարց ու պատասխան, եւ այլեւս այս բաժինները չեն թարմացվում: Այնինչ տեղեկությունների տրամադրման կարգի մասին Կառավարության որոշմամբ՝ նախատեսվում է, որ այս բաժնում պետք է հրապարակվեն 5 եւ ավելի միեւնույն բովանդակության հարցումները եւ դրանց պատասխանները: Հաճախ տրվող հարցեր բաժիններում առկա են լավագույն դեպքում 1-2 հարցեր եւ դրանց պատասխանները: Մինչդեռ հանրային քննարկման որքան հարցեր են բարձրացնում լրագրողները, որոնք շատ հաճախ կրկնվում են եւ ստիպում պետական մարմնին նորանոր պատասխաններ մշակել եւ ուղարկել:

Այսպիսով, մեր դիտարկումները ցույց են տալիս, որ պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերում հրապարակված տեղեկությունները ամբողջական եւ լիարժեք չեն, իսկ հրապարակված տեղեկատվության թարմացումներն ապահովված չեն: Տեղեկությունների մի զգալի հատվածը մատչելի չէ, թեւեւ հրապարակված է, բայց խիստ դժվար է փնտրողի համար գտնել իրեն անհրաժեշտ ու հետաքրքրող տեղեկատվությունը:

Առաջարկություններ

- Կառավարության տեղեկատվական քաղաքականությունը հիմնականում իրականացվում է ռեակտիվ սկզբունքով: Թե սոցիալական ցանցերում, թե

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ավանդական մեղիաներում կառավարությունն առավել հաճախ հանդես է գալիս հնչող քննադատությունը հերքելու կամ պատասխանելու գործառնությամբ: Մինչդեռ, պրոակտիվ հրապարակայնության գործառնությամբ խիստ պասիվ է իրականացվում: Առավել ակտիվ ջանքեր է պետք գործադրել տեղեկատվական սեփական միասնական օրակարգ ձևավորելու եւ տեղեկությունների հոսքը ըստ այդմ կազմակերպելու նպատակով: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել կառավարությունում առկա հանրային տեղեկությունները պրոակտիվ եղանակով հանրությանը հասցնելու համար՝ պարզ եւ մատչելի եղանակով:

- Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պաշտոնական կայքերի բովանդակային եւ կառուցվածքային միասնականությունը ապահովելու համար: Դրանք պետք է լինեն մեկ տրամաբանությամբ, մեկ ձեւաչափով ու մեկ ինտերֆեյսով կառուցված եւ գործարկվող: Միաժամանակ, անհրաժեշտ է ապահովել կայքերում հրապարակվող տեղեկությունների ամբողջականությունը, թարմացումները եւ մատչելիությունը:
- Հրապարակման ձեւի ընտրությունը. տեղեկատվություն տնօրինողը պետք է տեղեկությունն այնպես հրապարակի, որ այն հնարավորինս արագ եւ հեշտ հասանելի լինի այն փնտրող կամ դրա կարիքն ունեցող յուրաքանչյուրի համար: Օգտագործողի համար չափազանց կարեւոր է, որ նույնաբովանդակ տեղեկությունները բոլոր մարմինների կայքերում նույն բաժիններում հրապարակվեն: Օրինակ՝ բոլոր կայքերում լինի վիճակագրություն բաժինը, որտեղ օգտագործողները կգտնեն վիճակագրական տվյալներ:
- Հաճախ տրվող հարցերի վերաբերող դրույթի պատշաճ իրականացումը կարող է էականորեն կրճատել հարցումների թիվը, եթե հաճախ տրվող հարցերն ամփոփվեն եւ դրանց պատասխանները պրոակտիվ հրապարակվեն կայքերում, ապա միեւնույն բովանդակությամբ հարցումներն էականորեն կկրճատվեն՝ հանգեցնելով պետական ռեսուրսների խնայողության:
- Պետական կառավարման մարմիններում թափանցիկության ապահովման եւ հրապարակայնության բարձրագույն կարեւորագույն նախադրյալը տեղեկություն տնօրինող մարմնի աշխատակիցների համապատասխան պատրաստվածությունն է: Առաջարկում ենք պարբերաբար, տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնել տեղեկատվության ազատության թեմայով վերապատրաստումներ, աշխատանքային քննարկումների ժամանակ անդրադառնալ տեղեկատվության ազատության իրավունքին, ինչպես նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Առաջարկություններ ուղղված կայքերում հրապարակված կոնկրետ տեղեկությունների համակարգմանն ու դասակարգմանը.

- կայքի գլխավոր էջում, ամենաակնառու տեղում հրապարակել տեղեկությունների տրամադրման համար պատասխանատու անձի անունը, կոնտակտային տվյալները: Կառուցվածք բաժնում եւս նշել SU պատասխանատու անձի վերաբերյալ տեղեկությունը, հրապարակել նրա գործառնությունները: Սա էականորեն կհեշտացնի լրագրողների աշխատանքը:

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

- Կայքի գլխավոր էջում առանձնացնել Տեղեկատվության ազատության բաժինը, որտեղ պետք է հրապարակել տեղեկությունների տրամադրման կարգը, տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը, առցանց հարցում ուղարկելու ենթաբաժինը, ՏԱ պատասխանատուի տվյալները, ՏԱ իրավունքի պարզաբանումները, տեղեկություն տրամադրելու վճարների չափերը, տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ վիճակագրական տվյալները, ՏԱ օրենսդրության իրավական ակտերը եւ այլ անհրաժեշտ նյութեր:
- Թվային տվյալներ պարունակող բոլոր փաստաթղթերը տեղադրել օգտագործման համար մատչելի open data ձևաչափով: PDF ձևաչափով փաստաթղթերը հրապարակել պատճենելու հնարավորությամբ: Սա շատ կարեւոր է տարբեր փաստաթղթեր համադրելու, դրանցում առկա տեղեկատվության հետ աշխատելու համար:

ԲԱԺԻՆ Բ.

Տեղեկատվության ազատության իրացումը հարցումների միջոցով

Քանի որ ՀՀ կառավարությունը չի իրականացնում տեղեկություններ ստանալու հարցումների միասնական վիճակագրություն, ուստի տեղեկություն ստանալու պրակտիկայում հանդիպող հիմնական խնդիրները վեր հանելու նպատակով մենք դիտակել ենք Ինֆորմացիայի ազատության կենտրոն մասնագիտացած ՀԿ-ի հարցումների վիճակագրությունը **2018թվականի մայիսի 1-ից մինչ 2019 թվականի նոյեմբերի 1-ն** ընկած ժամանակահատվածի կտրվածքով:


Հարցումների վերլուծությունը հնավորություն է տալիս մի քանի կարեւոր եզրահանգումներ անել տեղեկություն ստանալու պրակտիկայի զարգացման եւ առկա խնդիրների վերաբերյալ:

Նշենք, որ եթե նախկինում հարցումների մոտ 5% չէր հասնում հասցեատեր պետական մարմիններին՝ էլեկտրոնային հասցեների հետ կապված տարաբնույթ խնդիրների, փոստային առաքման թերությունների կամ այլ պատճառով, ապա ներկայում այս խնդիրները իսպառ վերացել են Կառավարության կողմից 2018թվականին գործարկված e-request.am համակարգի շնորհիվ: Համակարգը միացված է պետական կառավարման մարմինների Մալբերի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին, եւ այս խողովակով ուղարկված հարցումներն անմիջապես մուտք են լինում ներքին համակարգ՝ բացառելով դրանց կորելու կամ տեղ չհասնելու հնարավորությունը:

Նշված ժամանակահատվածում ԻԱԿ-ի ներկայացրած հարցումների պաշտոնական պատասխանների ընդհանուր պատկերը հետևյալն է.

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հարցումների վիճակագրություն 01.05.2018 - 01.11.2019



Պետական մարմիններին ուղղված տեղեկություն ստանալու հարցումների 74 տոկոսն ստացել է լիարժեք պատասխան, իսկ 18 տոկոսին տրվել է թերի պատասխան: Նշված ժամանակահատվածում ԻԱԿ-ի հարցումների 74 տոկոսին տրված լիարժեք պատասխանների ցուցանիշը փոքր-ինչ զիջում է նախորդող տարիներին տրված լիարժեք պատասխանների ցուցանիշին: 2014-2018թթ լիարժեք պատասխանների տոկոսը ստատանվում էր 77%-ից 86%-ի շրջակայքում:

Մյուս կողմից էականորեն նվազել են լուռ մերժումները. ներկայիս 3%-ը նախորդող տարիների 12-16 տոկոսի համեմատությամբ (2014-2018թթ):

Մեծ թիվ են կազմում հարցումների պատասխանների ուշացումները: Լիարժեք պատասխանների 16 տոկոսը եկել էղել է ժամկետանց:

Հարցումների 18 տոկոսին տրվել է թերի, ոչ բավարար պատասխան: Այստեղ մենք ունենք թերի պատասխանների աճ, նախորդող տարիների 10-13% տոկոսի համեմատությամբ: Թերի պատասխանների աճը որոշակիորեն համեմատական է նախկինում մերժվող կամ անտեսվող հարցումների թվին: Սա պայմանավորված է երկու կարեւոր հանգամանքով: Առաջինն այն է, որ էականորեն աճել է հարցումների եւ դիմումների ընդհանուր ծավալը, գրեթե կրկնակի, եւ պետական վարչական ռեսուրսները չեն բավարարում այդ ծավալի աշխատանք կատարելու համար: Երկրորդ հանգամանքն այն է, որ պետական մարմիններում խոսնակների կամ ՏԱ պատասխանատուների հաստիքները համալրվել են նոր աշխատակիցներով, ովքեր չունեն բավարար փորձ եւ գիտելիք իրենց պարտականությունները կատարելու, նաեւ հավելյալ ծավալի աշխատանք կատարելու համար:

Նշված ժամանակահատվածում ուղարկված հարցումների 6 տոկոսին տրվել է մերժում: 3

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

տոկոս կազմում են անպատասխան մնացած հարցումներ կամ լուր մերժումները:
Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին 10 տոկոս լուր մերժում է գրանցվել
և 1 տոկոս անհիմն մերժում:

Քաղաքացիները պետական մարմիններին դիմում են թե գրավոր՝ փոստային
ծառայության միջոցով, թե էլեկտրոնային եղանակով՝ e-request համակարգի կամ
պաշտոնական կայքում հրապարակված պաշտոնական էլ. հասցեով կամ ֆեյսբուք
սոցիալական ցանցով: Ըստ ԻԱԿ-ի տվյալների՝ 2015-2019թթ.ին ՀՀ կառավարությունը և 18
նախարարությունները միասին ստացել են ընդհանուր թվով 300 էլեկտրոնային հարցում,
ինչը բավականին բարձր ցուցանիշ է էլեկտրոնային կառավարման գործիքների
կիրառելիությունը գնահատելիս:

Պետական մարմինների խոսնակների մի մասը նշում է, որ սոցիալական ցանցով
ստացված հարցումներին պաշտոնապես ընթացք են տալիս եւ պատասխանում օրենքով
սահմանված ժամկետներում: Մեկ այլ դեպքում, սակայն, որոշները նշում են, որ
ընդհանրապես ընթացք չեն տալիս սոցիալական ցանցերով ուղարկված հարցումներին:
Վերջիններս նշում են, որ իրենք ընթացք են տալիս միայն ստորագրության առկայության
դեպքում՝ ինչպես պահանջում է Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքը եւ
կառավարության որոշումը:

Այսպիսով, Ինֆորմացիայի ազատության կենտրոնին դիմած լրագրողների եւ
քաղաքացիների բարձրացրած հիմնահարցերն ամփոփելով՝ կարող ենք խոսել նաեւ
հետեւյալ գործնական խնդիրների մասին:

Պաշտոնական պատասխանների ոչ լիարժեք լինելը. Ինչպես նշեցինք վերելում՝ ամեն 5-
րդ հարցում ստանում է թերի պատասխան: Խնդիրը հատկապես ակնհայտ է դառնում այն
դեպքում, երբ հարցումը պարունակում է 1-ից ավելի հարցեր: Թեեւ օրենսդրությունը
պահանջում է, որ հարցմամբ դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման
դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է
բոլոր հարցերի *հավաստի և լրիվ* պատասխանները, պրակտիկայում հաճախ է
լրագրողների հարցումներում առկա մի շարք հարցադրումներին տրվում մեկ ընդհանուր
պարբերությամբ պատասխան, ինչը խախտում է օրենքի պահանջը, եւ դժվար է լինում
հասկանալ, թե կոնկրետ ո՞ր հարցի պատասխանն է տրամադրված:

Խտրականություն ԻԱԿ-ին դիմած լրագրողներից մեկն արդարացիորեն դժգոհում է, որ
նախարարություններից մեկի կողմից տրված գրավոր պատասխանում հստակ նշվել է, թե
չեն ուզում հենց իրեն հարցազրույց տալ: Սա խտրականության դրսևորում է, եւ նման
վերաբերմունքը բոլոր դեպքերում պետք է բացառվի:

Լրացուցիչ ժամանակի չարաշահում. Դիմողները նշում են, որ որոշ դեպքերում առկա է
լրացուցիչ ժամանակ խնդրելու օրենքի հնարավորության չարաշահում: Որոշ եզակի
կառույցներում լրացուցիչ ժամանակ են խնդրում բոլոր դեպքերում ավտոմատացված
ռեժիմով:

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր
լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և
Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի
գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի
համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Մերժելու կարգը. Որոշ դեպքերում խախտվում է օրինական մերժում տրամադրելու օրենքի պահանջը: ՏՄ օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը: Մերժումը պետք է լինի միայն գրավոր՝ դիմողին տեղեկացնելով մերժման պատճառները՝ հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով, թե օրենքի որ դրույթի համապատասխան է մերժվում տեղեկության տրամադրումը:

ՏՄ իրավունքի բախումը Անձնական տվյալների պաշտպանության իրավունքին: Նոր ի հայտ եկած հիմնախնդիրներից է 2015թվականին ընդունված Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքի կամայական կամ երկակի մեկնաբանությունները եւ կիրառման պրակտիկայի զարգացումը: Այդ օրենքին հղում անելով՝ լրագրողների տեղեկությունն ստանալու հարցումները մերժելը լայնորեն տարածված պրակտիկա է դարձել: Պետական գերատեսչությունները հաճախ մերժում են տեղեկատվության տրամադրումը՝ պայմանավորելով անձնական տվյալ լինելու հանգամանքով: Շատ նույր է տեղեկատվության ազատության եւ անձնական տվյալների պաշտպանության միջեւ սահմանը: Ցավոք, երբեմն մեծ է լինում գաղթակցությունը մերժել տեղեկատվության տրամադրումը անձնական տվյալների պաշտպանության հիմքը չարաշահելով: Խնդրը առավել սրվեց 2016 թվականի դեկտեմբերից, երբ առանց հանրային քննարկման փոփոխության ենթարկվեց ԱՏՊ օրենքը եւ օրենքից դուրս բերվեց 3-րդ հոդվածում ամրագրված մամուլի համար կարելու պաշտպանությունն ապահովող դրույթը, համաձայն որի՝ լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակումը դուրս էր օրենքի կարգավորման շրջանակից եւ անձնական տվյալներ մշակելու լրագրողական նպատակը որպես կարելուագույն արժեք պաշտանված էր օրենքով: Այս օրենսդրական փոփոխությունները ուղղակիորեն նոր իրավահարաբերություններ էին ձևավորում մամուլի համար: Օրենքի փոփոխությունը հանգեցրեց մի իրավիճակի, երբ լրագրողը պաշտոնյայի կամ որեւէ այլ անձի մասին անձնական տվյալներ հավաքելուց, պահելուց, հրատարակելուց կամ այլ գործողություններ իրականացնելուց առաջ պարտավոր է ստանալ տվյալ անձի նախնական համաձայնությունը: Սա չի համատեղվում կոռուպցիոն ռիսկերի մասին, պետական միջոցները անձնական նպատակներով ծախսելու դեպքերի մասին հետաքննելու, հրապարակելու, ահազանգելու՝ մամուլի կարելու գործառույթի հետ:

Առաջարկություններ

- Պետական մարմինները պարտավոր են քաղաքացիներին տրամադրել իրենց տնօրինության տակ գտնվող եւ հանրային հետաքրքրություն ներկայացնող լիարժեք, ամբողջական եւ ժամանակին տեղեկատվություն: Պետական մարմինները պետք է տրամադրեն իրենց տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը ողջ ծավալով:
- Տեղեկությունն ստանալու հարցումներին ընթացք տվող պաշտոնյաների պարբերաբար ուսուցումները եւ փորձի փոխանակման ծրագրերի իրականացումը պետք է անընդհատ գործընթաց լինի: Նորանշանակ խոսնակներն ու ՏՄ պատասխանատուները պետք է զինվեն լուրջ հումություններով ու գիտելիքով

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կարգավորումների եւ լավագույն փորձի վերաբերյալ:

- Պետական կառավարման մարմինները պետք է լիարժեք պատասխան տրամադրեն լրագրողների բոլոր հարցումներին, բացառեն ուշացումները: Լրատվամիջոցների որեւէ հարցում անպատասխան չպետք է մնա: Թերի պատասխանները պետք է բացառվեն կամ նվազագույնի հասցվեն:
- Տարբեր լրատվամիջոցների հանդեպ խտրական վերաբերմունքը պետք է բացառվի անկախ որեւէ հանգամանքից:
- Մերժումները պետք է հիմնավորված լինեն եւ պարտադիր պարունակեն օրենքի այն դրույթին հղումը, որի հիման վրա մերժվում է տեղեկատվության տրամադրումը: Մերժումը բոլոր դեպքերում պետք է լինի գրավոր:
- Երբ տեղեկատվության տրամադրումը պահանջում է լրացուցիչ ժամանակ, ապա դիմող լրատվամիջոցին անհրաժեշտ է 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այդ մասին՝ ներկայացնելով հետաձգման պատճառը: Հետաձգման հնարավորությունը չպետք է չարաշահվի:
- Անհրաժեշտ է ԱՏՊ օրենքում սահմանել հատուկ դրույթ, որ լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակումը պետք է որոշակի բացառություն լինի օրենքի խիստ կարգավորումներից: Խիստ կարևոր է, որ տվյալների պաշտպանության օրենսդրությունը չօգտագործվի որպես զանցանքների, չարաշահումների կամ կեղծիքների բացահայտմանը խոչընդոտող վահան:
- e-request էլեկտրոնային համակարգի ակտիվացում եւ վիճակագրության վերլուծություն յուրաքանչյուր գերատեսչության համար:
- Առկա են հարցումներ ներկայացնելու բազմաթիվ խողովակներ՝ թե՛ գիծ, սոցիալական ցանցեր, e-request, անմիջապես պաշտոնական կայքեր, էլ. փոստ, սակայն չկա ձեւավորված միասնական պրակտիկա եւ կարգավորում: Անհրաժեշտ է ընդունել եւ կիրարկել միասնական կարգավորում եւ պրակտիկա էլեկտրոնային հարցումներին ներկայացվող վավերապայմանների եւ դրանց ընթացք տալու վերաբերյալ՝ պարտադիր պետական կառավարման բոլոր մարմինների համար: Դիմողի համար պետք է կանխատեսելի եւ պարզ լինի, թե որ հարթակներով մուտք եղած հարցումներին ինչ մեխանիզմով է ընթացք տրվում: Ընդ որում, այդ մեխանիզմը պետք է նույնական լինի բոլոր մարմինների պարագայում:

ԲԱԺԻՆ Գ.

Տեղեկատվության ազատության ապահովման համար անհրաժեշտ կառուցվածքային եւ գործառութային խնդիրներ

Պետական կառավարման մարմիններում առկա է տեղեկատվական գործառույթներն ապահովող ստորաբաժանումների եւ խոսնակների գործառույթների կրկնություն եւ միասնական պրակտիկայի բացակայություն:

Ընդ որում, տարբեր մարմիններում այս ստորաբաժանումների անվանումներն իրարից տարբերվում են՝ Հասարակության և տեղեկատվության վարչություն, Հասարակայնության հետ կապերի բաժին, Մամուլի և հասարակայնության բաժին և այլն:

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

6 մարմնի դեպքում առկա է եւ՝ խոսնակ, եւ՝ ստորաբաժանում՝ իր առանձին ղեկավարով: ՀՀ Վարչապետին առընթեր մարմնում միայն խոսնակ է: ՀՀ Կառավարությանն առընթեր 6 մարմնում էլ առկա է միայն ստորաբաժանում: **Այսպիսով, 18 պետական կառավարման մարմինների պարագայում առկա է 4 տարբեր մոդել եւ պրակտիկա, ինչն անթույլատրելի է:**

Խոսնակի եւ տեղեկատվական գործառույթներ ապահովող ստորաբաժանման ղեկավարի լիազորությունների շրջանակը տարբեր գերատեսչություններում խիստ տարբեր է: Հարցումների պատասխան ստանալու համար լրագրողները շփվում են ինչպես խոսնակների, այնպես էլ տեղեկատվության ստորաբաժանման ղեկավարի հետ. տարբեր գերատեսչություններում այդ հարցը տարբեր լուծումներ է ստանում:

Պարտականությունների կրկնությունն ակնհայտ է դառնում այն դեպքերում, երբ լրագրողները գրավոր դիմում են տեղեկություն ստանալու հարցմամբ, որից ծագող իրավահարաբերությունները գտնվում են յուրաքանչյուր գերատեսչության տեղեկատվության ազատության պատասխանատու անձի լիազորությունների շրջանակում՝ համաձայն Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի: Ընդ որում, որպես կանոն, ՏՍ պատասխանատուն յուրաքանչյուր մարմնում տարբեր մակարդակներ է ներկայացնում՝ գլխավոր քարտուղարից մինչեւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ եւ այլն:

Մեկ այլ խնդիր է ներքին համարժեք ու բավարար կոորդինացիայի պակասը քարտուղարության, խոսնակի, տեղեկատվության վարչության ու գերատեսչության ղեկավարի միջեւ:

2018 թվականին ընդունված Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ պետական կառավարման մարմիններում հասարակայնության եւ տեղեկատվության վարչություն/բաժինները այսուհետ պետք է համակարգվեն մամուլի խոսնակի/քարտուղարի կողմից: Այդուհանդերձ, այս իրավական նորմը չի նպաստել միատեսակ պրակտիկայի ձեւավորմանը պետական կառավարման համակարգում. բազմաթիվ գերատեսչություններում օրենքի ընդունումից 1 տարի անց առկա են եւ՝ մամուլի խոսնակի, եւ՝ վարչության պետի պաշտոնները, իսկ ոլորտի աշխատանքը համակարգվում է երկուստեք: Ավելին, այս օրենքի ընդունումը հաղորդակցության ոլորտում առաջ է բերել հավելյալ մի քանի հիմնախնդիր.

1. Հանրային ծառայության մասին ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետով համաձայն՝ «Նախարարություններում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը հայեցողական պաշտոն է, որը սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է մամուլի քարտուղարը: Այսպիսով, նախարարություններում ստորաբաժանման քաղաքացիական ծառայողների անմիջական ղեկավարը հանդիսանում է հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը, տվյալ դեպքում՝ մամուլի քարտուղարը, ով նաեւ այդ ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքը գնահատող, վերապատրաստում նշանակող անձն է: Այսպիսով, պետք է

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

արձանագրել, որ հայեցողական պաշտոնին նշանակված անձը պետք է տիրապետի քաղաքացիական ծառայության վերաբերյալ հմտություններին՝ աշխատանքը գնահատելու, վերապատրաստման անհրաժեշտությունը արձանագրելու և ստորաբաժանումը ղեկավարելու համար, ինչը խիստ դժվար է ապահովելը:

2. Այս փոփոխության հետ կապվող մյուս մտազոհությունն այն է, որ պետական կառավարման մարմնի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունները, որոնք տվյալ կառույցի ընդհանուր տեղեկատվական քաղաքականություն իրականացնողն են, ղեկավարվում են հայեցողական, ասել է թե քաղաքական չեզոքություն չունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից:
3. Օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Հայեցողական պաշտոնների համար նախատեսվում է պաշտոնի անձնագիր, որի համար չափանիշներ սահմանում է այն պաշտոնատար անձը, ում անմիջական ենթակայությամբ է աշխատելու հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը: Փաստորեն, ստորաբաժանման ղեկավար մամուլի քարտուղարի անձնագրի չափանիշները կարող են լինել խիստ հայեցողական, ոչ միասնական, տարբեր նախարարություններում տարբեր, քանի որ այն սահմանվում է տարբեր գերատեսչությունների ղեկավարների կողմից:
4. Վերջապես, Օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ «Հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի որոշմամբ՝ առանց մրցույթի՝ բավարարելով տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները»: Ստորաբաժանման ղեկավար մամուլի քարտուղարը նշանակվում է առանց մրցույթի, բավարարելով հայեցողական պաշտոնի անձնագրին: Պաշտոնի անձնագիրը լինելով փոփոխական փաստաթուղթ, չպարունակելով պաշտոնի գործառույթների հիմնական սկզբունքները, բավարար չէ համոզված պնդելու, որ այդ անձնագրի հիման վրա նշանակված անձը կտիրապետի նախարարության ոլորտին, պետական մարմնի գործառույթներին և կնպաստի ճշգրիտ հանրային կարծիքի ձևավորմանը՝ չապահովելով նաև պետական մարմնի կողմից իրականացվող տեղեկատվական քաղաքականության կայունությունը եւ անընդհատությունը:

Գերատեսչություններում տեղեկատվական գործառույթներն ապահովող խոսնակների կամ ստորաբաժանման ղեկավարների գիտելիքի եւ հմտության մակարդակը տեղեկատվության ազատության եւ հաղորդակցության ոլորտում տարբեր գերատեսչություններում տարբեր է:

Նոր Կառավարության ձևավորումից ի վեր բազմապատկվել են գերատեսչություններին ուղղված տեղեկություն ստանալու հարցումները: Նաև տեղեկատվության հաստիքները համալրվել են նոր կադրերով, որոնք չունեն ոլորտում կիրառելու համար անհրաժեշտ բավարար փորձ եւ գործնական հմտություններ: Մյուս կողմից, նաև անփոփոխ են մնացել տեխնիկական ռեսուրսները:

Գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումների տեխնիկական հագեցվածությունը խիստ անհամաչափ է: Գերատեսչությունների հիմնական մասը

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

տեխնիկական և մասնագիտական հագեցվածության կարիք ունի: Գոյություն չունի տեխնիկական և մարդկային ռեսուրսների բաշխվածության մեկ միասնական մեխանիզմ եւ պատկեր: Պետական կառավարման մարմինների տեղեկատվական գործառույթներն ապահովող ստորաբաժանումների մարդկային ռեսուրսների բաշխվածությունը եւս տարբեր է՝ 1-ից մինչեւ 7 եւ ավելի աշխատակից:

Ընդհանրապես հմտությունների եւ աշխատանքային համապատասխան փորձի պակասը լուրջ խոչընդոտ է պետական մարմինների տեղեկատվական քաղաքականության իրականացման հարցում: Խնդիր է նաեւ որոշ մարմիններում տեխնիկական հնարավորությունների խիստ սահմանափակ եւ ոչ արդիական լինելը: Սակայն, ինչպես արդարացիորեն նշում է հարցման մասնակից խոսնակներից մեկը՝ այս դաշտում ոչ այնքան մարդկանց քանակի, որքան առկա ռեսուրսների, վերապատրաստման, գիտելիքի թարմացման կարիք կա, որ կարողանան ժամանակին համընթաց կազմակերպել աշխատանքները:

Թեեւ Տեղեկատվության ազատության եւ հաղորդակության ուսուցումը ներառված է ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի ամենամյա պարտադիր ուսուցումների շարքում դեռեւս 2009թվականից, սակայն պետական բյուջեից հատկացումներ չկատարվելու պատճառով այդ ուսուցումներն իրականացվում են ոչ պարբերաբար եւ բացառապես դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ:

Անձնակազմի եւ տեխնիկայի կարիքները բազմազան են՝ օպերատորի, մոնտաժողի, գրաֆիկ դիզայների, SMM մասնագետի, PR մարքեթինգի մասնագետի, SS ոլորտի տեխնիկական մասնագետի, վիզուալ կոնտենտի մշակման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների և գործիքների, թարգմանիչների կարիք: Որոշ կառույցներում մեկ աշխատակիցը համադրում է առավելագույն քանակի գործառույթներ, ինչը կարող է իջեցնել գործունեության արդյունավետությունը: Կարիք ունեն նաեւ սոցիալական ցանցերում նյութերի առաջխաղացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների, որոնք, սակայն, գնումների ընթացակարգով չեն նախատեսվում:

Առաջարկություններ.

- Անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտով հստակ տարանջատել մամուլի խոսնակ-հասարակայնության եւ տեղեկատվության ստորաբաժանման եւ Տեղեկատվության ազատության պատասխանատու անձի լիազորություններն ու գործառույթների շրջանակը եւ բացառել գործառույթների կրկնությունը: Անհրաժեշտ է համադրել եւ ներդաշնակեցնել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի եւ ՀՀ Կառավարության N1204-Ն որոշմամբ առաջարկվող համանման հարցերին վերաբերող կարգավորումները:
- Անհրաժեշտ է միասնական մեխանիզմ եւ պրակտիկա ձեւավորել պետական կառավարման բոլոր մարմիններում, ինչը կհանգեցնի պետական կառավարման

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

վարչարարության կանխատեսելիության եւ արդյունավետության բարձրացմանը մամուլի համար:

- Վերանայել հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը եւ վերացնել առկա հիմնախնդիրները, որոնք ծագում են օրենքի վերոնշյալ հակասությունների հետեւանքով:
- Առաջարկվում է Տեղեկատվության ազատության, հաղորդակցության եւ հանրության հետ կապերի վերաբերյալ կանոնավոր դասընթացներ կազմակերպել պետական կառավարման բոլոր մարմինների խոսնակների, ինչպես նաեւ ստորաբաժանումների աշխատակիցների համար: Դասընթացները պետք է առնչվեն ինչպես տեղեկատվության մատչելիության իրավական հարցերին, այնպես էլ տեղեկատվության կառավարման տեխնիկական/գործնական հմտություններին:
- Անհրաժեշտ է հզորացնել պետական բոլոր մարմինների տեխնիկական կարողությունները, և տեղեկատվության պատասխանատուներին և հանրության հետ կապերի վարչություններին ապահովել նրանց աշխատանքը կատարելու համար բավարար տեխնիկական ռեսուրսներով:

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ԲԱԺԻՆ Դ.

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկումը եւ առկա մեխանիզմները

Խիստ կարեւորվում է տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության գործուն մեխանիզմների առկայությունը: ՀՀ-ում տեղեկություն ստանալու իրավունքի խախտման դեպքում առկա է բողոքարկման երեք մեխանիզմ.

- Վարչական բողոքարկում
- Բողոքարկում Մարդու իրավունքների պաշտպանին
- Դատական բողոքարկում

Որպես կանոն, վարչական բողոքարկման մեխանիզմը խիստ անարդյունավետ է: Վերադասության կարգով բողոքարկելու դեպքում որոշ դեպքերում բողոքը կրկին մակագրվում է այն անձին, ում գործողությունների դեմ դիմողը բողոք է ներկայացրել, ինչը թեւեւ օրենքի խխատում է, բայց նաեւ լայնորեն տարածված պրակտիկա: Վերադասության կարգով բողոքը քննելիս գրեթե մշտապես նույն որոշումն է կայացվում, եւ մերժվում տեղեկատվության տրամադրումը:

Մարդու իրավունքների պաշտպանի պարագայում խնդիրներն այլ են: Այս կառույցը շատ ծանրաբեռնված է մարդու մյուս առավել խոցելի իրավունքների պաշտպանության հարցերով եւ որոշ դեպքերում չի կարողանում արագ արձագանքել տեղեկություն ստանալու իրավունքի խախտման դեպքերին: Ինչպես տեղեկացնում են պաշտպանի աշխատակազմից՝ տեղեկատվություն ստանալու ենթադրյալ խախտման 46 եւ 109 բողոք է ստացել Պաշտպանի աշխատակազմը համապատասխանաբար 2017 եւ 2018թթ.ին: Համեմատության համար նշենք, որ ԻԱԿ-ը միայն 2018 թվականին ստացել է 350-ից ավելի դիմում քաղաքացիներից եւ լրագրողներից տեղեկություն ստանալու խախտումների վերաբերյալ:

Առավել արդյունավետ մեխանիզմ կարելի է համարել դատական բողոքարկումը, ինչը սակայն նույնպես ունի թերություններ: տեղեկություն ստանալու խախտված իրավունքի պաշտպանության ձեւավորված դատական պրակտիկան թեւեւ դրական է, սակայն ոչ արդյունավետ: Այնուամենայնիվ, դատական պաշտպանության առաձնահատկությունները հնարավորություն չեն տալիս պրակտիկայում առանց պետական հոգաձության լուծել տեղեկատվության ազատության ոլորտի խնդիրները: Մի գործի քննությունը կարող է տարիներ տևել, արդյունքում ստացած տեղեկատվությունն այլևս կորցնում է իր կարեւորությունն ու իմաստը: Դատական բողոքարկումը բացառապես դառնում է սկզբունքի հարց: Տեղեկատվությունը շատ շուտ հնանում է, իսկ դատաքննության երկարաժամկետ լինելու դեպքում այն այլևս անհրաժեշտ չի լինում բողոքարկող կողմին: Բացի այդ, դատարան դիմելը որոշակի ծախսեր է ենթադրում, ինչը չեն կարող թույլ տալ մեղիաները: Դատական կարգով ՏԱ իրավունքի պաշտպանության ապահովումը մինչ այսօր մեծիմասամբ իրականացրել են հասարակական կազմակերպությունները: Օրինակ, ՀՀ-ում ՏԱ ոլորտում մասնագիտացած Ինֆորմացիայի ազատությանը կենտրոն ՀԿ-ն նախաձեռնել է 80-ից ավել ռազմավարական դատական գործեր, որոնց 70 տոկոսն ավարտվել է դրական ելքով:

ՀՀ-ում գոյություն չունի պետական լիազոր որևէ մարմին, որն առնվազն.

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

- Կիրականացնի տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանություն,
- Կիրականացնի SU պրակտիկայի վիճակագրության վարում, վերլուծություն եւ լավագույն փորձի ներդրում,
- Կապահովի SU իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար,
- Կապահովի SU ոլորտի օրեսդրության պարզաբանում եւ միասնական պրակտիկայի ձեւավորում:

Մեր համոզմամբ, այս լիազորությունների կատարումը պետք է լինի միջազգային պրակտիկայում արդյունավետությամբ կիրառվող արդատական մարմնի գործը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լավագույն երաշխիքը տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտն է: SU հանձնակատարը/լիազոր մարմինը պետական մարմին է, որը արտադատական կարգով լուծում է տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը: SU հանձնակատարն էլ պետք է հանդիսանա SU իրավունքի խախտումների բողոքարկման արտադատական մարմին՝ լիազորված պետական կառավարման մարմին:

1. SU հանձնակատարի ստեղծումը կարող է ծառայել SU իրավունքի պաշտպանությանը՝ SU օրենսդրության կիրառման և տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների բողոքարկման գործընթացներում չարաշահումները բացառելու միջոցով: Միննույն ժամանակ հասարակությունը կարիք ունի իմանալու, թե ինչպես է գործում SU իր իրավունքը, ինչպես պետք է դիմել տեղեկություն ստանալու համար, տեղեկություն ստանալու ինչ ընթացակարգ գոյություն ունի և վերջապես, ինչպես բողոքարկել իրենց SU իրավունքի խախտումները: Կարևոր է նաև, որպեսզի հասարակությունն իմանա, թե օրենքով նախատեսված SU սահմանափակումների հիման վրա որ տեղեկատվության տրամադրումն է ենթակա մերժման, որպեսզի հիմնավոր մերժումները չհանգեցնեն պետական մարմինների հանդեպ վստահության նվազման:
2. SU հանձնակատար ունենալու անհրաժեշտության երկրորդ հիմնավորումը SU իրավունքի խախտումների անկախ վերանայումն է: Որպես գործունեության հիմնական նպատակ՝ SU հանձնակատարը պետք է ընդունի և քննի SU իրավունքի խախտման վերաբերյալ բողոքները, ունենա նաև խախտումները բողոքարկելու իրավասություն՝ անկախ այն բանից, թե ինչպիսի խախտման մասին է խոսքը՝ անօրինական մերժում, լուռ մերժում, թե SU իրավունքի այլ խախտում:
3. SU հանձնակատարի ինստիտուտի հիմնադրման մեկ այլ պատճառ է SU իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկատվության հավաքագրումը՝ վիճակագրություն այն մասին, թե քանի հարցում է ներկայացվել տեղեկություն տնօրինողներին, քանիսն են պատասխան ստացել, ինչ ժամկետներում, հիմնականում ինչ խնդիրներ են բարձրացվել հարցումների միջոցով և այլն: Այս

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

տվյալներից յուրաքանչյուրն էլ իր հերթին կարող է ուղեցույց լինել SU իրավունքի առավել արդյունավետ իրականացման համար:

4. SU հանձնակատարի ինստիտուտի հիմնադրման կարելորագույն պատճառ է նաև տեղեկատվության ազատության վերաբերյալ լավագույն փորձի մասին իրազեկելու, խորհրդատվություն տալու, տեղեկություն տնօրինողներին եւ քաղաքացիներին կրթելու անհրաժեշտությունն է: Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի¹ 9-րդ հոդվածը սահմանում է պետության պարտականությունը իրազեկել հասարակությանը պաշտոնական տեղեկատվություն ստանալու իրավունքի մասին, որն ի թիվս այլնի ներառում է նաև պաշտոնյաներին տեղեկություն տրամադրելու իրենց պարտականության մասին կրթելու եւ իրազեկելու գործառույթ: Այս դրույթն ընդհանրապես չի կատարվում պետության կողմից, այլ իրականացվում է ՀԿ-ների աշխատանքի շնորհիվ:

Առաջարկություններ

- Տեղեկություն ստանալու իրավունքի բավարար պաշտպանության համար անհրաժեշտ է հիմնել անկախ արտադատական մեխանիզմ՝ Տեղեկատվական հանձնակատար (Information Commissioner)՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա: Որպես լավագույն մոդել ՀՀ-ի պարագայում կիրառելի կարող է լինել Էստոնիայի փորձը, որտեղ գործում է SU եւ USՊ միասնական հանձնականատարի գրասենյակ: ՀՀ-ի պարագայում առաջարկում ենք ՀՀ Արդարադատության նախարարության կազմից դուրս բերել USՊ գործակալությունը եւ դրա ինստիտուցիոնալ հենքի վրա ստեղծել միասնական SU եւ USՊ հանձնակատարի գրասենյակ: Այս կառույցը պետք է ունենա լիարժեք վարչական, տնտեսական եւ քաղաքական անկախություն:
- Մինչ անկախ արտադատական մարմնի ձեւավորումը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ավելի ակտիվ պետք է քննի տեղեկություններ ստանալու իրավունքի խախտումները և համապատասխան միջոցներ ձեռնարկի այդ իրավունքը պաշտպանելու համար: Խիստ նպատակահարմար է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում տեղեկատվության ազատության հետ կապված դիմումներով զբաղվի առանձին աշխատակից կամ աշխատակիցների խումբ:
- Տեղեկատվության ազատության վերաբերյալ գործեր քննելիս դատարանները պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնեն գործի դատաքննությունը եւ որոշումների կայացումը՝ հաշվի առնելով տեղեկատվության շուտ հնացող բնույթը:

¹ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d2118

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Առաջարկների փաթեթը մշակվել է «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Հանրային լրագրության ակումբի կողմից ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակների դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ: